



1. Համառոտ նկարագրություն.



«ՄԻՆԻ ԿԱՄԿՈ» ապահովագրատեսակը ցամաքային տրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրություն է, որը նախատեսված է միայն 1-16 ԲՄ դաս ունեցող ֆիզիկական անձանց համար:
Ապահովագրության ենթակա են միայն ՀՀ-ում գրանցված անձնական օգտագործման մարդատար տրանսպորտային միջոցները:

2. Տրանսպորտային միջոցներ, որոնք ենթակա չեն ապահովագրության.



- » Էքսկյուզիվ
- » սպորտային
- » որպես տաքսի շահագործվող
- » որպես վարձակալություն շահագործվող
- » որպես ուսումնական շահագործվող



3. Ապահովագրման ենթակա SU-ների թողարկման տարեթիվ.

8-18 տարեկան (այս պահին՝ 2006-2016թթ արտադրության)

4. Ապահովագրական դիսկեր



- » ՃՏՊ
- » Հրդեհ, պայթյուն
- » Թռչող առարկաների վայր ընկնում
- » Տարերային աղետներ
- » Բախում, հարված



5. Ապահովագրության ժամկետ.

1 տարի



6. Ապահովագրական գումար.

- 1,000,000 ՀՀ դրամ
- 1,500,000 ՀՀ դրամ



7. Ոչ պայմանական չհատուցվող գումար.

Չի կիրառվում

8. Ապահովագրավճար.

Բազային սակագին 4% * գործակից կախված շարժիչի հզորությունից ու ԲՄ դասից:

Նվազագույն ապահովագրավճարը կկազմի 40,000 ՀՀ դրամ:



Շարժիչի հզորություն	Կարգավորիչ գործակից
Մինչև 80 ձ/ու	1,05
81 – 140 ձ/ու	1,15
141 – 230 ձ/ու	1,2
231-ից ավել ձ/ու	1,3

ԲՄ դաս	Կարգավորիչ գործակից
1 - 5	0,9
6 - 10	1
11 - 12	1,1
13 - 16	1,15



ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Օրինակ 1

- » Ապահովագրվող մեքենա – Toyota Camry, 2013թ արտադրության
- » Ապահովադրի ԲՄ դաս – 2
- » ՏՄ ձիաուժ – 178

Կասկո տարեկան ապահովագրավճարը = $1,000,000 * 4\% * 1,2 * 0,9 = 43,200$ ՀՀ դրամ

Կասկո տարեկան ապահովագրավճարը = $1,500,000 * 4\% * 1,2 * 0,9 = 64,800$ ՀՀ դրամ

Օրինակ 2

- » Ապահովագրվող մեքենա – Nissan Sunny, 2007 արտադրության,
- » Ապահովադրի ԲՄ դաս – 14
- » ՏՄ ձիաուժ – 116

Կասկո տարեկան ապահովագրավճարը = $1,000,000 * 4\% * 1,15 * 1,15 = 52,900$ ՀՀ դրամ

Կասկո տարեկան ապահովագրավճարը = $1,500,000 * 4\% * 1,15 * 1,15 = 79,350$ ՀՀ դրամ

9. Լիազորված վարորդներ.



- » 20 տարեկանից բարձր, 2 տարվա վարորդական փորձ ունեցող վարորդներ
- » Առավելագույնը 4 վարորդ



10. Գործողության տարածք.

- » ՀՀ, Վրաստան (Վրաստանը ներառելու դեպքում ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում է 1,1 գործակից)



11. Լրացուցիչ ռիսկեր.

» Վարորդի և ուղևորների ապահովագրություն դժբախտ պատահարներից



12. Պահանջվող փաստաթղթեր ու տեղեկություններ.

- » Տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր
- » Սեփականատիրոջ և լիազորված վարորդների անձնագիր կամ նույնականացման քարտ
- » Վարորդների վարորդական վկայականներ
- » Հեռախոսահամար

Ուշադրություն - Մինչ պայմանագրի կնքումը կատարվում է մեքենայի զննություն:



13. Ապահովադիր/շահառուի/լիազորված վարորդի գործողությունները պատահարի դեպքում

Ապահովադիրը/Շահառուն/Լիազորված տիրապետողը ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարտավոր է՝

- » չտեղաշարժել տրանսպորտային միջոցը
- » չընդունել որևէ պատասխանատվությունը
- » անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին՝ վկայագրում նշված հեռախոսահամարով:
- » Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը/Շահառուն/Լիազորված տիրապետողը ապահովագրական պատահարի արդյունքում գտնվել է անգիտակից վիճակում: Անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը/Շահառուն/Լիազորված տիրապետողը պարտավոր է անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին:



ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ապահովագրական ռիսկեր/պատահարներ.



- » Ֆիզիկական վնասվածք (հաշմություն) ՃՏՊ արդյունքում: Հատուցումն իրականացվում է համաձայն Դժբախտ պատահարներից ապահովագրության Պայմանների աղյուսակ 2-ի
- » I, II, խմբի հաշմանդամություն ՃՏՊ-ի արդյունքում
- » Մահ ՃՏՊ-ի արդյունքում



2. Ապահովագրական գումար.

2,500,000 ՀՀ դրամ՝ առավելագույնը 5 նստատեղ, յուրաքանչյուր նստատեղի համար 500,000 ՀՀ դրամ



3. Ոչ պայմանական չհատուցվող գումար.

Չի կիրառվում



4. Ապահովագրավճար.

5,000 ՀՀ դրամ



ՄԵՔԵՆԱՅԻ ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅՈՒՆ



1. Ապահովագրական ռիսկեր/պատահարներ.

- » Էվակուատորի ծառայություն
- » Շարժական վուլկանացում/անվաղողերի վերանորոգում
- » Մարտկոցի սնուցում
- » Բենզինի առաքում



2. Ապահովագրական գումար.

Հատուցման առավելագույն սահմանաչափ՝ 300,000 ՀՀ դրամ:



3. Ոչ պայմանական չհատուցվող գումար.

Չի կիրառվում



4. Ապահովագրավճար.

20,000 ՀՀ դրամ



5. Գործողության տարածք.

Երևան քաղաքում և հարակից մարզերում՝ Արարատ, Արմավիր, Արագածոտն, Կոտայք